Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/2470/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Գնման գործընթացի՝ օրենքի ուժով կասեցումը վերացնելու մասին

04 հունիսի 2024թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/2470/02/24 քաղաքացիական գործով նման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում միջնորդությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի վարույթում է քննվում թիվ ԵԴ2/2470/02/24 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԵՐՎԱԴԱ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-10/1 ծածկագրով փակ նպատակային մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 29-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված նախաորակավորման ընթացակարգի թիվ 2 արձանագրությունը՝ «Միռոռոս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ Պաշտպանության նախարարը ներկայացրել է միջնորդություն՝ վերացնել ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-10/1 ծածկագրով փակ նպատակային մրցույթով նախատեսված գնման գործընթացի վրա սահմանված կասեցումը:

Որպես Միջնորդության հիմք նշվել է, որ ՔԴՕ 234.11-րդ հոդվածը սահմանում է գնման գործընթացի օրենքի ուժով կասեցում՝ մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը, մինչդեռ քննարկվող գործընթացի շրջանակներում կնքվել է ածուխի մատակարարման գնման պայմանագիր, որով սահմանված ապրանքի մատակարարումը հրատապ է և նախատեսված է մարտական դիրքերի՝ ջեռուցման համար, այսինքն՝ առաջացել է անհրաժեշտություն՝ շարունակել մատակարարումը, որը բխում է պաշտպանության ապահովման շահերից:

Դատարանը գտնում է, որ Միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

ՔԴՕ 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բողոքարկությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման

գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

Դատարանն արձանագրում է, որ վեճի առարկա գնման գործընթացն իրականացվել է ածուխի մատակարարման պայմանագրի կնքման նպատակով, որն իր հերթին ուղղված է ՀՀ պաշտպանության նպատակների իրականացմանը՝ սույն դեպքում մարտական դիրքերի ջեռուցման համար, որպիսի հանգամանքը էական է դիտարկելու, որ նշված պայմանագրի կնքումն ու կատարումն ուղղված են ՀՀ պաշտպանության շահերի ապահովմանը, ինչի արդյունքում Օրենքի ուժով առկա գնման գործընթացի կասեցումը ենթակա է վերացման:

Դատարանի նշված եզրահանգումը բխում է նաև «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումից, համաձայն որի՝ գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝

ա) պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը. ...:

Վերոգրյալի հիման վրա՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով, 199-200 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ2/2470/02/24 քաղաքացիական գործով վերացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի ուժով թիվ ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-10/1 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Դ. ՄԽԵՅԱՆ**